

Համախմբուի՝ ի խնդիր Հայաստանի ու Արցախի փրկութեան. Արամ Ա. կաթողիկոսի ամանորի պատգամը



Կարդալ՝ էջ 3

ՀՅԴ ԳԵՄ-ի կազմակերպութեամբ բողոքի հաւաք ՄԱԿ-ի փախստականներու հարցերով գերագոյն յանձնակատարի Մոնթրէալի գրասենեակին դիմաց



Դեկտեմբեր 28ին, ՀՅԴ Գանատայի երիտասարդական Միութեան (ԳԵՄ) «Լեւոն Շանթ» եւ «Բեկոր Աշոտ» մասնաճիւղերու կազմակերպութեամբ, Մոնթրէալի մէջ կա-
յացաւ Արցախի զօրակցութեան հաւաք: Մոնթրէալի Միացեալ Ազգերու Կազմակեր-
պութեան փախստականներու հարցերով գերագոյն յանձնակատարի գրասենեակին
դիմաց ԳԵՄ-ի անդամները բողոքի իրենց ձայնը բարձրացուցին, պահանջելով վերջ
տալ Ատրպէյճանի կողմէ Արցախի շրջափակման: ՄԱԿ-ի գրասենեակի պաշտօնա-
տարներ կապ հաստատեցին ցուցարարներուն հետ եւ իրազեկ դառնալէ ետք կացու-
թեան, խոստացան ցուցարարներու բողոքին մասին տեղեկացնել ՄԱԿ-ի փախստա-
կաններու հարցերով գերագոյն յանձնակատարի Օթթուալի Կեդրոնական գրասեն-
եակի գերատեսչութեան: Բողոքի ցույցի աւարտին, ՀՅԴ Գանատայի երիտասարդական
Միութեան անդամները երգեցին «Ելէք հայեր Պաշարի» երգը:

ՀՅԴ Բիւրոյի Յայտարարութիւն

Ծաւալապաշտական նկրտում-
ները բաւարարելու Ազրպէյճանի
յանցաւոր քաղաքականութիւնը շա-
րունակում է:

Հեռահար նպատակներ հե-
տապնդող «բնապահական»
կազմակերպուած սադրանքի հետե-
ւանքով 2022 թուականի դեկտեմբե-
րի 12-ից փակ է Արցախն ու Հայաս-
տանը իրար կապող միակ ճանապար-
հը՝ Բերձորի միջանցքը: Փաստօրէն
Արցախը գտնւում է ամբողջական
շրջափակման մէջ եւ շուրջ 120.000
հայ բնակչութիւնը կանգնած է
մարդասիրական աղէտի առջեւ:

Հերթական անգամ Ազրպէյճա-
նը շինծու պատրուակով կոպտօրէն
ոտնահարում է 2020 թուականի նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեամբ ձեռ-
բերուած պայմանաւորուածութիւնները՝ առանց լուրջ հակազդեցութեան արժանա-
նալու Հայաստանի եւ Ռուսաստանի կողմից:

Ազրպէյճանի այս սանձարձակ վարքագիծը, ինչպէս միշտ բացայայտ կերպով
հովանաւորում է թուրքիայի ռազմաքաղաքական դեկաւարութեան կողմից:
Թուրք-ազրպէյճանական դաշինքի նպատակները պարզ են՝ հայաթափել Արցախը,
մասնատել եւ ինքնիշխանութիւնից զրկել Հայաստանի Հանրապետութեանը:

Անցնող շաբաթների ընթացքում արցախահայութիւնը հերթական անգամ ի
ցոյց դրեց իր անկողորմ կամքն ու ոգին եւ հակառակ բոլոր դժուարութիւններին
շարունակում է տէր կանգնել իր ինքնիշխանութեանը: Տարբեր միջազգային կառոյց-
ների եւ առեանների, բազմաթիւ երկրների պետական հաստատութիւնների եւ պաշ-
տօնատար անձանց հասցեական դատապարտումները, առանձին գործիչների յայտա-
րարութիւնները խիստ կարեւոր եւ գնահատելի նկատելով հանդերձ, կ'անդրադառ-
նանք, որ դրանք բաւարար չեն Ազրպէյճանի անմարդկային գործելակերպը կանխե-
լու համար:

ՀՅ Դաշնակցութիւնն իր կազմակերպական միաւորների, Հայ դատի գրասեն-
եակների եւ յանձնախմբերի, ուղեկից միութիւնների եւ քոյր կառոյցների միջոցով
կարողացել է դեկտեմբերի 12-ից դիւանագիտական, քաղաքական, տեղեկատուական-
քարոզչական եւ մարդասիրական գետնի վրայ հակադաւալ աշխատանքներ իրակա-
նացնել եւ այսուհետ եւս արուելու է առաւելագոյնը արցախահայութեանը զօրավիզ
կանգնելու եւ Արցախի իրաւունքները պաշտպանելու համար:

Արցախը հայկական պահելու հարցում բոլորս անելիք ունենք: Դժուարին ու
ճակատագրական զարգացումները դեռ առջեւում են: Ինքնակազմակերպուելու, հա-
մազգային ջանքերով մեր իրաւունքներին տէր կանգնելու ու մեր ազգային շահերը
պաշտպանելու մարտահրաւէրների առջեւ ենք:

Առ այդ, ՀՅԴ Բիւրոն անհրաժեշտ է համարում Արցախի իշխանութիւնների հետ
անմիջականօրէն աշխատող, համահայկական ցանցային ներուժը կազմակերպող եւ
համակարգող մարմին առաջացնելու շուրջ գործնական քայլերի ձեռնարկումը:

Միաժամանակ, մէկ անգամ եւս, հարկ ենք համարում Հայաստանի օրուայ իշ-
խանութիւններին յորդորել գերծ մնալու Հայաստանի եւ Արցախի շահերը վտանգող,
ապաշնորհ ու անհեռաւոր քաղաքականութիւնից: Հայաստանը չի կարող հրաժար-
ուել Արցախի անվտանգութեան երաշխաւորի յանձնառութիւնից: Որեւէ պարագա-
յում Արցախի ինքնիշխանութիւնը, արցախահայութեան ինքնորոշման իրաւունքը
չեն կարող սակարկման առարկայ լինել: Ցանկացած ետքայլ կ'արժանանայ հակազ-
դեցութեան՝ բոլոր հնարաւոր ձեւերով եւ եղանակներով:

ՀՅԴ ԲԻՒՐՕ
5 յունուար 2023

YES YOU CAN

Introducing,
The All-New HR-V



CONTACT US FOR
MORE INFORMATION

**KEVORK ASADOURIAN
TRO BACHEKJIAN**

 

7000, boul. Henri-Bourassa Est
Montréal-Nord, (Québec) H1G 6C4
☎ : 514 321-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Մեփակաճատեր
Յարութ Միփան

Հնտանէկան բացառիկ գործառնութիւն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Արցախի Պատգամաւորները Փութինին, Պաշտընին
Եւ Մաքրոնին Կոչ Կ'ուղղեն՝ Ստեփանակերտի
Օդակայանի Գործարկման Ուղղութեամբ Քաջերու
Զեռնարկելու

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամաւորները, խորհրդա-
րանի նախագահ Արթուր Թովմասեանի գլխաւորութեամբ, Յունուար 6-ին դիմած են
ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի Համաձայնագահող երկիրներու ղեկավարներ Ռուսիոյ նա-
խագահ Վլատիմիր Փութինին, Միացեալ Նահանգներու նախագահ Ժո Պայտընին,
Յրանսայի նախագահ Էմանուել Մաքրոնին՝ կոչ ուղղելով չօգտօգտի քայլեր կիրարկե-
լու Բերձորի միջանցքի բացման կամ Ստեփանակերտի օդակայանի գործարկման ուղ-
ղութեամբ: «Արմէնիփրես» կը հաղորդէ, որ Արցախի Ազգային ժողովի հրապարակ-
ուած հաղորդագրութեան մէջ նշուած է.

«Այսօր 25-րդ օրն է, որ կը շարունակուի փակ մնալ Արցախը Հայաստանին եւ արտաքին աշխարհին կապող միակ ճամբան:

«Արցախեան Հիմնախնդիրը միակ տագնապն էր, որուն մասին ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի բոլոր համանախագահող երկիրները գրեթէ նոյն տեսակէտը ունէին: Մարդասիրական աննախադէպ աղէտի առջեւ կանգնած Արցախի ժողովուրդը, մեծ հաշուով, ո՛չ միայն հասցեական յայտարարութիւններու կարիք ունի, այլ նաեւ, կը կարծեմ, այդ ուղղութեամբ գործնական ու տեսանելի քայլերու ձեռնարկելու անհրաժեշտութիւնը կայ: Առողջական ծանր խնդիրներով հիւանդները զրկուած են անհրաժեշտ դեղորայքէն եւ առողջապահական ծառայութիւններէն, Արցախը զրկուած է մանկական սնունդի եւ պարենային ու առաջին անհրաժեշտութեան ապրանքներու մատակարարումէն:

«Քաղաքակիրթ աշխարհին, մասնաւորաբար Մինսքի խմբակին համանախագահող երկիրներուն կողմէ՝ ուղղենք որոշակի քայլեր կիրարկելու միջոցների բացման կամ օգտին կամօրջի՝ Ստեփանակերտի օգնակայանի գործարկման ուղղութեամբ, ինչ որ պիտի արտօնէ ձմեռնային ժամանակաշրջանի բնի սլ կանխելու Արցախի մէջ գոյութիւն ունեցող մարդասիրական տագնապայի ճշգրտմամբ»:

Արցախը 29-րդ Օրն Ըլլալով Ծրջափակման Մէջ.
Արցախի Մէջ Կը Մշակուին Կտրօնալիւն Համակարգի
Ներդրման Գործիքակազմերը

Արցախի մէջ կը մշակուին կտրօնային համակարգի ներդրման գործիքակազմերը: Սա կարելիութիւն պիտի ընձեռէ առուելագոյնս համաչափ բաշխել առկա պարենային ապրանքները: Այս հարցը այսօր քննարկուած է Արցախի գործադիր շտապի նիստին:

Սկզբնական շրջանին կը նախատեսուի կտրօնային համակարգը կիրարկելը առաջնային նշանակութեան քանի մը ապրանքատեսակներու համար:

Պետական նախարար Ռուբեն Վարդանեան նշած է, որ իրենց այցելութիւնները ցոյց տուած են, որ շրջափակման դժուարութիւնները չեն կոտրած մարդոց ոգին:

Նրա սիր ընթացքին անդրադարձ եղած է նաեւ Կարմիր խաչի միջազգային կոմիտէի միջոցով ծանր հիւանդներու տեղափոխման, ինչպէս նաեւ անչափահաս երեխաներ ունեցող՝ կիսուած ընտանիքներու միաւորման կարելիութիւններուն:

Յունուար 9-ին Արցախի շրջափակման 29-րդ օրն էր: Արցախի բռնկական հաստատություններուն մէջ կան տասանեակ մը ծանր հիւանդներ, որոնք երեւանեան մասնագիտացած բժշկական կեդրոններուն մէջ բուժումը չարունակելու կարիք ունին, մինչեւ այժմ կարելի եղած է ընդարձակել 15 հոգի տեղադրութեւ, միայն Կարմիր խաչի միջնորդութեամբ եւ անոնց մեքենաներով:

Ուսկնդրեցե՛ք Գանատայի տարածքին սփռուող հայկական ռատիոժամերը՝

ՎԱՆԳՈՒԿԸՐ- «Armenian Variety Show» Coop Radio 100.5 FM
Երեքշաբթի երեկոները ժամը 6:00-7:00

ԹՈՐՈՆԹՕ- «Կիլիկիոյ Ձայն» CHTO AM 1690
Կիրակի երեկոները ժամը 8:00-11:00

ԼԱՎԵԼ- «Յայ Կեդրոնի Ձայն» 105.1 FM
ACC Laval Radio Program
Շաբաթ եւ Կիրակի առաւօտեան ժամը 7:30-9:00

ՄՈՆՏՐԵԱԼ- «Վանայ Ձայն» 1450 AM
Երկուշաբթի երեկոները ժամը 8:00-10:00

ՉԿԱՒԵՐՏՈՆ- «Յայ Կեդրոնի» ռատիոժամ CFMU 93.3 FM
Կիրակի առաւօտեան 10:00-11:00
cfmu.mcmaster.ca



CAMAM

3401, Olivar Asselin Montréal, Qc H4J 1L5	397, boul. des Prairies Laval, Qc H7N 2W6	45 Hallcrown Place Willowdale, On M2J 4Y4
---	---	---

To donate online www.camam.org

Համախմբուիլ՝ ի խնդիր Հայաստանի ու
Արցախի փրկութեան. Արամ Ա.
Կաթողիկոսի ամանորի պատգամը

Տազնապալից պայմաններու մէջ կ'ողջունենք Նոր Տարին: Յուսահատութեամբ ու անորոշութեամբ լեցուն է հայ կեանքը: Ահաւոր փտանգներով չըջապատուած են Հայաստանն ու Արցախը:

Իրատես հայեացքով դիտենք հայ կեանքը: Պատմութիւնը ինքզինք կը կրկնէ. Հայաստանը դարձեալ դարձած է կռուախնձոր մեծ ուժերու միջեւ: Թշնամին պաշարումի ենթարկած է Արցախը: Ան կը գտնուի նաեւ ինքնիշխան Հայաստանի սահմաններէն ներս վտանգելով Հայաստանի հողալիքն ամբողջականութիւնը: Նոյն թշնամին կը սպառնայ նման կացութիւններ ստեղծել որեւէ ժամանակ անտեսելով միջազգային օրէնքներն ու մարդասիրական սկզբունքները: Եւ աւելին, Հայաստանը կը մնայ միշտ ենթակալ աշխարհաքաղաքական շահերու բախումին, ինչպէս նաեւ ռազմական միջոցներով քաղաքական շահեր հետապնդելու ճնշումներու:

Փաստորէն չունինք իրաւ բարեկամներ: Առանձին ենք: Չունինք ազգային ռազմավարութիւն: Չունինք միացեալ ճակատ՝ ազգին տազնապնէրը միասնաբար դիմագրաւելու: Միայն զիրար կ'ամբաստանենք ու կը մեղադրենք: Յաղթական Արցախը կորսնցուցած է իր ազատագրեալ հողերուն մեծ մասը ու կը դիմագրաւէ գոյութենական խնդիր: Հայաստանը եւս ենթակայ է կորսնցնելու իր գերիշխանութիւնը:

Այս անել կացութեան զինաց ի՛նչ ընել, որո՛ւ վատահիլ: Պատասխանը յստակ է, մեր դարաւոր պատմութեան հարուստ փորձառութեամբ հաստատուած ու մեր բւիւրաւոր նահատակներու արիւնոյ թրծուած:– Կատահիլ մեր սեփական ուժին: Հո՛ս է մեր հզօրութեան կռուանը, մեր փրկութեան միակ ճամբան: Այլ ընտրանք չունիք:

5-րդ դարուն, մեր պատմութեան ճակատադրական մէկ Հանգրուանին, մեր պատմահայրը, Մովսէս Խորենացին դարերէն եկող ու դարերուն գացող յիշեցում մը կատարեց ուղղուած մեր ազգին, ինչպէս նաեւ Հայաստանը շրջապատող կայսրութիւններուն, յայտարարելով, թէեւ փոքր ազգ ենք, սակայն «արութեան գործեր»ով լեցուն է մեր կեանքը: Արդարեւ, մեր ազգը «արութեան գործեր»ով, այլ խօսքով՝ խոր հաւատքով եւ ազգին ու Հայրենիքին համար արիւն թափելու ամուր փճոսկանութեամբ հզօրացած հայրենիք կերտեց ու պաշտպանեց, հակառակ պարտադրուած բաժանումներուն, հալածանքներուն ու ցեղասպանութեան: Վկայ մեր դարաւոր պատմութիւնը:

Հետեւաբար, արթննա՛նք այլեւս ժողովուրդ հայոց, պատմական Հայաստա-
նէն մնացած կտոր մը հողը եւս կրնայ մեր ձեռքէն երթալ:

Ներկայ ճակատագրական պայմաններուն մէջ, առաւել քան երբեք, հրամայական է ու անմիջական, համահայկական իտեյաներու ու գերագոյն արժէքներու շուրջ մեր ազգին համախմբումը եւ անոր ազգային յանձնառութեան ամրացումը, քաղաքական հեռանկետութեամբ ու մարտունակ դիւանագիտութեամբ շաղախուած:

Այս պահը ազգային ուխտի վերանորոգման նուիրական պահ է:

Հսենք մեր սուրբերուն աղօթքը ու մեր հայրերուն պատգամը, եւ, հաւատա-
րիմ մեր անցեալի ու ներկայի նահատակներու սրբազան կտակին, համախմբու-
նք համախմբուինք Հայաստան, Արցախ եւ Սփիւռք, որպէս մէկ ազգ, ի խնդիր Արցա-
խի փրկութեան ու Հայաստանի անկախութեան պաշտպանութեան:

Այսօր մեր ազգին «արութեան գործ»ը պէտք է ըլլայ միասնականութիւն ամէն բանէ վե՛ր, մեր ողջ ներուժին ու մարդուժին համախմբու՞մով ու հայոց բա-
նակին վերակազմակերպու՞մով:

Նոր Տարուան սեմին, իր երակներուն մէջ հայու արիւն ունեցող հայը ուրիշ մարմանք չի կրնար կատարել:

Թող Աստուած անսասան պահէ մեր ազգը ու հզօր Հայաստանն ու Արցախը:

Թող Աստուած մեր ժողովուրդին առջեւ բանայ սիրոյ ու համերաշխութեան, արդարութեան ու խաղաղութեան ճամբան:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՔԷՊԷԳ «ՍԱՆԱՀԻՆ» ՄԱՍՆԱՃԻԻՂԻ
«ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ» ԳՐԱԴԱՐԱՆ

Այս տոնական օրերու նախօրեակին գրադարանի անձնակազմը կը շնորհաւորէ իր անդամ-անդամուհիներուն, նուիրատուներուն, ինչպէս նաեւ բարեկամներուն Նոր Տարին եւ Ս. Ծնունդը:

Այս առթիվ կոև դանք յիշեցնելու մեր գրասէր Հասարակութեան, թէ գրա-
դարանը բաց է հետեւեալ ժամանակացոյցով:- Ամէն երեքշաբթի եւ Հինգշաբթի
կէսօրուայ ժամը 12:00-4:00, իսկ Կիրակի օրերը կէսօրէ առաջ ժամը 11:00-էն
մինչեւ կէսօրէ ետք ժամը 2:00:

Կը սպասենք ձեր այցելութեան: Սիրով պատրաստ ենք ձեզ գոհացնելու:
Գրադարանի անձնակազմ:



**Voyages
Haig
Travel**

Ձեր բոլոր ճամբորդական
Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊՐ ԼԱՅԱՍՏԱՆ...

**ԼԱՄԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ
ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ**

***Նոր Յացէ՛**

Voyages Haig Travel

4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

PERMIS DE QUÉBEC

Tel: + 1 514-284-7676

Email info@haigtravel.ca

«Մեր Պաշքարը Արդար Է, Եւ Վախճանը Կրնայ Ըլլալ Միայն Յաղթանակ».

Յակոբ Տէր Խաչատուրեան

Ստորեւ ՀՅԴ Բիւրոյի ցնքկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանի խօսքը՝ 16 դեկտեմբերին Թեհ-րանի մէջ կայացած ՀՅԴ 132–ամեակի հանդիսու-թեան։

ՀՅԴ օրուան հանդիսութիւններուն մեր կազմա-կերպութիւնը կը ներկայանայ ժողովուրդին՝ կատարե-լով հայութեան եւ հայրենիքի իրավիճակին վերլուծու-մը եւ իր գործունէութեան հաշուետուութիւնը։

Ժողովուրդի ծոցէն ծնած ՀՅ Դաշնակցութիւնը 132 տարիներու ընթացքին իր գաղափարներով եւ գոր-ծունէութեամբ դարձաւ՝ ազգային–ազատագրական պայքարի մղիչ ուժ, ժողովրդային շարժում, քաղաքա-կան կուսակցութիւն եւ Հայ դատ ու պահանջատիրու-թիւն հետապնդող կազմակերպութիւն։

Եւ կերտեց մարտնչող հայու ազնիւ, քաջ, խիզախ, անկեղծ, յանձնառու եւ գաղափարապէս պինդ կերպար, որուն օրինակով դաստիարակուեցան ու ներշնչուեցան սերունդներ եւ աներեր նուիրուեցան հայութեան ու հայրենիքին անսակարկ ծառայութեան։

Մենք մինչեւ 2020 սեպտեմբեր յաղթանակած ժո-ղովուրդ էինք։ Արցախը ազատագրուած էր, Հայաստա-նը՝ վերանկախացած, Զաւախքը՝ աշխուժացած, Արեւմտ-եան Հայաստանի մէջ զարթօնքի ծիլեր՝ արձակուած, եւ սփիւռքի մէջ ունեցած էինք Հայ դատի կարեւոր ձեռք-բերումներ համաշխարհային մակարդակով։ Հայաստան–Արցախ–սփիւռք եռամիասնութիւնը ամրապնդուած էր, եւ ազգային օրակարգի հիմնական կէտերու շուրջ ալ համախոհութիւն ստեղծուած էր, մանաւանդ՝ 2015–ի հարիւրամեակի համախմբող մթնոլորտէն ետք։

Հայրենիքով ու հայութեամբ տոգորուած ոչ մէկ հայ անտարբեր կը մնար՝ ի տես այս մեծ յաղթանակե-րուն եւ իրագործումներուն, որոնք ամրապնդած էին մեր ազգային արժանապատուութիւնը, գոտեպնդած՝ ազգային իղձերու հանդէպ մեր հաւատքը եւ ստեղծած աննախընթաց համահայկական միասնականութիւն՝ ի սպաս մեր հայրենիքին ու իտէալներուն։ Մերթ ընդ մերթ ի յայտ եկող ներազգային տարաձայնութիւններն ու Հայաստանի իշխանութիւններու բազմապիսի խար-խափումները մանր անախորժութիւններ եւ սրբազրելի վրիպումներ կը թուէին ըլլալ մեծ պատկերին մէջ։

Մէկ խօսքով, տարուած էինք անպարտելիութեան եւ անխոցելիութեան համազգային զգացումներով, որովհետեւ, աղէտներու ու կորուստներու հարիւրամեա-կէ ետք պայծառ դարաշրջան մը բացուած էր հայու-թեան առջեւ։

Այդ պատճառով ալ ապրեցանք ահաւոր ցնցում, երբ 2020–ի աշնան արցախեան երկրորդ պատերազմին կրած պարտութիւնը խորտակեց այդ անպարտելիու-թեան եւ անխոցելիութեան հանգանակը։

Պատերազմի ընթացքին ամէն տարակարծութիւն մէկդի դրած՝ նուիրուած էինք հայութեան յաղթանակը ապահովելու գործին չորս ուղղութիւններով.

Ա) Մարդուժի տրամադրում պահեստազօրի ճամ-բով

Առաջին ուղղութիւնը պատերազմին մարդուժի տրամադրումն էր։ Հայ Յեղափոխական Դաշնակցու-թիւնը վերակենդանացուցած էր իր առասպելական, ֆե-տայական կերպարով թրծուած երիտասարդութեան հա-մախմբումը իր կամաւոր պահեստազօրին մէջ։ Դրեթէ հազարի հասնող այդ կամաւորներու փաղանգը տրա-մադրուած էր պատերազմին, արիաբար մասնակցած՝ մարտերուն, կերտած՝ յաղթանակներ եւ տուած՝ մեծա-թիւ զոհեր։

Բ) Քաղաքական Համաշխարհային զօրաշարժ երկրորդ ուղղութիւնը մեր քաղաքական ու հա-մաշխարհային զօրաշարժն էր։

Հայ դատի յանձնախումբերով, մեր մարմիններու ներկայացուցիչներով, հայ երիտասարդութեան աշխուժ մասնակցութեամբ կարողացանք շարժել աշխարհը, որ-պէսզի ճշգրիտ գնահատոււմ տայ պատերազմին, հարկ եղած միջամտութիւնները կատարէ՝ մերթ անաջող, բայց շատ մը պարագաներու նաեւ մեր թշնամիներուն՝ թուրք–ազրպէյճանական զօրքերուն աշխատանքնե-րուն հակազդող։

Գ) Քարոզչական պատերազմ երրորդ ուղղութիւնը քարոզչական պատերազմն էր։

Վստահ եմ, որ բոլորդ ալ ականատես էիք այն հսկայական արշաւին, որ Թուրքիա եւ Ազրպէյճան չղթալազերծեցին ոչ միայն Հայաստանի եւ Արցախի, այլեւ ամբողջ հայութեան դէմ։ Հարկ էր անմիջապէս անցնիլ աշխատանքի, ողողել աշխարհի մայրաքաղաք-ները՝ ցոյցերով, հաւաքներով եւ բողոքի արտայայտու-

թիւններով. նաեւ՝ ուժգնօրէն հակազդել հասարակաւան ցանցերով, որոնց մէջ կը տարուէր հակահայ պայքար՝ մեծապէս ֆինանսաւորուած այդ երկու պետութիւննե-րուն կողմէ։ Փառք ու պատիւ մեր երիտասարդութեան, որուն միջոցով մենք կարողացանք առաջքը առնել այդ գրոհին եւ հասարակական ցանցերու մէջ անհրաժեշտ հակահարուածը տալ։

Դ) Նիւթական օժանդակութիւն Եւ վերջապէս, աննախընթաց միասնականու-թեամբ մենք կարողացանք պատերազմի օրերուն եւ անկէ ետք իսկ ապահովել այնպիսի նկատառելի նիւթա-կան օժանդակութիւն, որ աննախընթաց ձեւով եւ մեծ գումարներով սատարեց նաեւ մեր պաշտպանութեան եւ պատերազմէն ետք սկսած վերականգնումի աշխա-տանքներուն։

44–օրեայ պատերազմի ընթացքին Հայաստանի իշխանութիւններու կեղծ քարոզչութեամբ տարածուած սին յոյսերը փլատակուեցան 2020–ի նոյեմբերին։ Հա-մատարած հիասթափութիւն ապրեցանք, երբ շղարշը պատռուեցաւ, եւ մեր կորուստներու իսկական տարո-ղութիւնը պարզուեցաւ։

Ազգային աղէտի պատճառ հանդիսացած Հայաս-տանի ղեկավարը մերժեց ընդունիլ Արցախն ու Հայաս-տանը աղէտի առաջնորդած ըլլալու հանգամանքը, չնախընտրեց արժանապատուօրէն հրաժարիլ ու անցն-ցում հեռանալ, ընդհակառակն, վճռեց ամէն գնով կառչած մնալ իր իշխանութեան աթոռին եւ սատարեց հայրենիքը նուաստացնող պարտուողական պայմաննե-րու գոյացումին։

Յառաջացաւ նոյնիսկ խզում հայրենիքի եւ սփիւռքի միջեւ։ Իսկ Հայաստանի իշխանութիւնը ամէն ճիգ թափեց ապակողմնորոշելու եւ շարունակաբար պառակտելու հայրենի ժողովուրդը եւ յաջողեցաւ ինք-զինք վերարտադրել։

«Բաժնէ՛, որ տրեւոյ»–ի քաղաքականութիւնը որ-դեգրած Հայաստանի իշխանութիւնը այսօր սփիւռքն ալ պառակտելու սեւ գործին է ծուած։ Մինչդեռ թշնա-միներով չըջապատուած եւ մեծ հարուած ստացած մեր հայրենիքին համար, աւելի քան երբեք, անհրաժեշտ է համահայկական կուռ միասնականութիւնը։

Այսօր դէմ յանդիման կը գտնուինք նորագոյն մարտահրաէյրներու, որովհետեւ պարտուած ու հայկա-կանութենէ պարպուած Հայաստանի իշխանութիւնները հայրենի շահերը պաշտպանելու իրենց անկարողու-թիւնը փաստած են, շարունակական նահանջի մէջ են եւ ամէն տեսակի զիջումներու՝ պատրաստ։

Այս կացութեան մէջ մեր առջեւ կը ցցուին հիմ-նական երեք մարտահրաւէրներ։

Առաջինը Ազրպէյճանի ճնշումով եւ Թուրքիոյ օժանդակութեամբ առաջ քշուող սահմանազատման ու սահմանազծման հարցերն են եւ անոնց առնչութիւնը՝ Արցախի խնդրին հետ։ ՀՅ Դաշնակցութիւնը Հայաս-տանի իշխանութիւնը զգուշացուցած էր, որ այս պատր-ուակի տակ ո՛չ մէկ սահմանազատում, ո՛չ մէկ սահմա-նազծում պէտք է անդադառնայ Ազրպէյճանի հողա-յին ամբողջականութեան, որով կրնայ թաղուիլ Արցա-խի հարցը։ Արցախը պէտք է մնայ համաշխարհային ուշադրութեան առարկան. Արցախի կարգավիճակը ճշդուած չէ, եւ այդ սահմանազատման եւ սահմա-նազծման գործընթացին մէջ պէտք էջ զոհել անոր ապագան։

Մենք աշխատելու ենք, որ վերականգնի Մինսքի համանախազահող եռեակի բանակցային գործընթացը, որպէսզի չեշտաւորուի Արցախի ինքնորոշման իրաւուն-քը, եւ բացառուի Թուրքիոյ առաւել ներթափանցումը Հարաւային Կովկասէն ներս։

Երկրորդը վերաթարմացուող կծիկն է հայ–թուր-քական յարաբերութիւններու բանակցութեան, որուն անխոհեմաբար դիմեց Հայաստանի իշխանութիւնը՝ հա-կառակ պարտութեան առթած աննպաստ պայմաննե-րուն եւ տկար դիրքերուն։ Մենք ունեցած ենք 2008–2009 տարիներու ահաւոր փորձառութիւնը, երբ հայ-թուրքական արձանագրութիւններու պիտակին տակ փորձուեցաւ համակարգել այդ յարաբերութիւնները։

Մեզի համար ներկայ հայ–թուրքական որեւէ բա-նակցութիւն հաշտեցման չի կրնար առաջնորդել։ Կարե-լի է ապագային պատկերացնել յարաբերութիւններու բնականոնացման հնարաւորութիւն, սահմաններու բա-ցում եւ դիւանագիտական յարաբերութիւններ, սա-կայն՝ առանց որեւէ նախապայմանի ու զիջումի։ Իսկ հայ–թուրք հաշտեցում կարելի է ակնկալել միայն այն ատեն, երբ Թուրքիա ճանչնայ հայոց դէմ իր գործած ցեղասպանութիւնը եւ կատարէ հատուցումներ։

Մեր ժողովուրդին պիտի շարունակենք բացատրել, որ Թուրքիան ինքն է միակողմանիօրէն փակած Հայաս-տանի հետ իր սահմանը ու ինքն ալ կրնայ վերաբանալ

զայն՝ առանց որեւէ դին պահանջելու Հայաստանէն։ Ինչպէս 2008–2009 թուականներուն, այսօր ալ մենք խնդիր ենք դրած, որ նախապատրաստուինք այդպիսի հնարաւորութեան համար։ Անցեալին հայեցակարգ էինք մշակած ու տրամադրած կառավարութեան՝ նշելով այն օրէնսդրական նախաձեռնութիւններն ու այլ քայ-լերը, որոնց պէտք է ձեռնարկէ Հայաստանը՝ չէզոքաց-նելու համար հասարակա–տնտեսական եւ քաղաքական հաւանական ժխտական հետեւանքները, երբ սահման-ները բացուին։ Յամենայն դէպս ոչ մէկ բնականոնա-ցում արտօնելի է, եթէ զոհ պիտի տրուին Յեղասպանու-թեան ճանաչման եւ պահանջատիրութեան մեր իրա-ւունքները։

Այսօր միայն Հայաստանի իշխանութիւնները դրական նախանշաններ կը նկատեն Թուրքիոյ կեց-ուածքին մէջ, բայց իրենցմէ գատ որեւէ լուրջ ուժ դրա-կան տեղաշարժ կամ բարեացակամ միտում չի տեսներ մեր դարաւոր թշնամիի կեցուածքներուն մէջ. ընդհա-կառա՛կը, մենք ականատեսն ենք, որ Թուրքիան ոչ միայն առաջ կը քաշէ նախկին նախապայմանները, այլ այսպէս կոչուած «Զանգեզուրի միջանցք»–ի բացումն ալ հիմա աւելցուցած է այդ ցանկին։ Մեզի համար յստակ է, որ պարտուած մթնոլորտի մէջ եւ թրքական ամէն տեսակի նախապայմաններու պարտադրանքին տակ կարելի չէ երեւակայել յարաբերութիւններու որեւէ բնականոնացում այս հանգրուանին։

Իսկ երրորդը այն է, որ Հայաստանի գերիշխանու-թիւնը վտանգուած ըլլալու իրողութիւնը պէտք եղած ձեւով չի մտահոգեր մեր իշխանութիւնները։

Մենք յայտարարած էինք, որ Արցախը մեր դար-պասն է, մենք ըսած էինք, որ Արցախը այն պաշտպա-նական գիծն է, որ ո՛չ միայն կ’ապահովէ իր անվտան-գութիւնը, այլեւ կը պաշտպանէ նոյնինքն Հայաստանի սահմանները։ Որքան ճիշդ դուրս եկաւ այդ հանգա-մանքը. այսօր շատ աւելի մեծցած են այդ սահմանե-րուն պաշտպանութեան ու անվտանգութեան խնդիր-ները։ Իսկ մեր թշնամիները, որոնց ախորժակները զրգռուած են Արցախի հանդէպ ունեցած իրենց «յաջո-ղութիւններու» բերումով, այս օրերուն թիրախաւորած են նաեւ Հայաստանը, մանաւանդ՝ Միւնեաց աշխարհը։

Արցախահայութիւնը, թէկուզ՝ վիրաւոր, սակայն իր վէրքերը ամոքելու, հայկական դիմագիծը պահպա-նելու, իր հանրապետութիւնը լիովին վերականգնելու եւ ամէն գնով Ազրպէյճանի ենթակայութեան տակ մնալը բացառելու գործին է լծուած։ Ամէն գնով պար-տինք համախմբել Արցախի բոլոր ուժերը, որպէսզի Ար-ցախի Հանրապետութեան վճռակամութիւնը պահպան-ուի, հայկական հողին խառնուած արիւնը տայ իր ար-դասիքը, եւ Արցախը շուտով վերագտնէ իր նախկին աշխուժութիւնն ու սահմանները։

Սփիւռքը եւս մէկ մարդու նման պիտի փարի հայրենիքի պաշտպանութեան սուրբ գործին, անխնայ պայքարի թուրքիա–ազրպէյճանական հայատեսաց եւ փանթուրանական ճակատին դէմ։ Դժուար պայքար է, բայց՝ ոչ անկարելի։ Ի վերջոյ, բոլորս գիտենք, որ ո՛չ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, ո՛չ հայ ժողո-վուրդը վհատած են, նոյնիսկ երբ իրենցմէ աւելի մեծ թիւով թշնամիներու դէմ պայքար մղած են եւ կերտած՝ մեծ յաղթանակներ։

Մենք նաեւ սփիւռքի վերաթարմացման եւ վե-րաշխուժացման հրամայականին դէմ յանդիման ենք կանգնած։ Եւ այդ ուղղութեամբ արդէն իսկ կը ծրագ-րենք կարճաժամկէտ եւ երկար շունչի վրայ նախաձեռ-նութիւններ։

Այսօր ներազգային առումով անհրաժեշտ է գո-յացնել ազգային նկարագիր ունեցող հայրենի, սփիւռքեան եւ համահայկական ողջ ուժերու համախմ-բում՝ ի պաշտպանութիւն հայրենիքի եւ ընդդէմ շա-րունակուող պարտուողական ու յանձնուողական դիր-քորոշումներուն։ Պէտք է շարունակել պայքարը հայու-թեան շահերը պաշտպանելու անկողող Հայաստանի իշ-խանութիւններու հեռացման համար, որպէսզի նոր մօ-տեցումներով ու աւելշով կարողանանք դիմադրել թշնամիներու գրոհին եւ վերականգնել մեր արտաքին բարեկամներու հետ իսկական գործակցութիւնը փոխա-դարձ շահերու հիման վրայ։ Պարտինք պայքարիլ հայ-րենի պետականութեան հիմքերը եւ սփիւռքեան կազ-մակերպ կառոյցները քայքայող Հայաստանի իշխանու-թեան բոլոր քայլերուն դէմ. իշխանութիւն մը, որ յա-րատեւ միակողմանի զիջումներու գացող է թշնամինե-րու առաջ, իսկ միաժամանակ անզիջող քանդիչ եւ բա-ժանարար սեւ գործին է լծուած ներազգային ճակատի վրայ։

Իսկ արտաքին ճակատի վրայ անհրաժեշտ է վե-

ՊԱՅՔԱՐ... Ծար. էջ 5





ՆԵՐՔԻՆ ՄՍՈՒՐԸ

«Փառք ի բարձունս Աստուծոյ
եւ յերկիր խաղաղութին»
ի մարդիկ հաճութին»
(ԺԱՄԱԳԻՐՔ)

Ինչ է մսուրը եւ ո՞ր կը գտնուի ան:
Փաստօրէն բոլորս ալ գիտենք, թէ՝ թագաւոր մը առանց պալատի չի կրնար իր թագաւորութիւնը հաստատել, նոյնպէս ալ թագաւորութիւն մը չի կրնար գոյատեւել առանց թագաւորի մը ղեկավարութեան, որովհետեւ այն պահուն որ թագաւորը կ’ուզէ պալատէն դուրս բնակիլ, ուրիշը զինք փոխարինելով կը քայքայէ իր թագաւորութիւնը եւ այսպիսով այդ պալատը կը դառնայ անապահով ու անպաշտպան:

Նոյնպիսին եղաւ նաեւ մսուրը սիրելիներ, Քրիստոսի ծնունդով մսուրը դարձաւ իւրաքանչիւր քրիստոնեայ հաւատացեալի պալատը:

Քրիստոս իր ծնունդով, այդ կեղտոտ, անմաքուր ախոռ բարայրը կերպարանափոխելով, մաքրագործելով դարձուց իր պալատը, ուր փափաքեցաւ հաստատել իր թագաւորութիւնը: Աստուած մեզմէ իւրաքանչիւրին մէջ գետեղած է մսուր մը, մեր ծնած իսկ վայրկեանէն, եւ այդ մէկը հաստատած ու կնքած է մեր մկրտութեան ժամանակ:

Ո՞ր կը գտնուի այդ մսուրը:

Պատասխանը պարզ ու յստակ է՝ մեր սրտերուն մէջ: Ինչո՞ւ սրտերուն մէջ, որովհետեւ սիրտը կեդրոնն է այն թաքուն ուժին, որ կը կառավարէ ամբողջ մեր բարոյական կեանքը: Հոն է սուրբ զգացումներու կեդրոնը, կատարեալ սիրոյ աղբիւրը, եւ այդ իսկ պատճառով Քրիստոս ըսաւ. «Երանի անոնց, որոնք սիրտով մաքուր են, որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն» (Մտ 5:8):

Ինչպէս ըսինք երբ պալատ մը զուրկ կը մնայ թագաւորէ այդ պալատը տկարանալով կը քանդուի, նոյնն է պարագան մեր մէջ գտնուող մսուրին, որ երբ ընդունած չ’ըլլար իր թագաւորին՝ իր Փրկչին, ժամանակի ընթացքին այդ մսուրը կը վերածուի ախոռի մը, ուր մեր կեանքի աղտը բազմանալով զայն կը փճացնէ:

Բնականաբար մեր կեանքի ընթացքին բոլորս ալ կը հանդիպինք փոթորկոտ ալեկոծումներու, կը դիմաւորենք բազմապիսի դժուարութիւններ, շատ անգամներ նաեւ տկարանալով չարին կը յանձնուինք եւ մեր ճամբէն շեղելով կը սկսինք մեր մտուրներուն մէջ գետեղել յուսահատութիւնը, անհաւատութիւնը, կասկածամտութիւնը, եսասիրութիւնը, հպարտութիւնն ու անբարոյութիւնը եւ այսպիսով այս թերութիւնները իրար վրայ հաւաքելով զիրար կը փոխանցենք, եւ ժամանակի ընթացքին կը վերածուինք այնպիսի անձի մը, որ ո՛չ կ’ուզէ զԱստուած մեր մէջ բնակեցնել եւ ո՛չ ալ առիթ կու տայ, որ ուրիշը իր մէջ բնակեցնէ զԱյն, եւ այսպիսով մեր կեանքի մսուրը կը վերածուի մութ ու տխուր իրականութեան, որովհետեւ հոն կը պակսի մսուրածին թագաւորը:

Այսօր, հրեշտակները անգամ մը եւս կու գան մեզ աւետելու, թէ՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Ահաասիկ վկայութիւն մը, որ կը պարզէ մեզ, թէ Քրիստոս ծնաւ եւ յայտնուեցաւ, որպէսզի այդ կեղտոտ պալատը «Մսուրը» մաքրագործէ բոլոր այդ վերոնշեալ ախտերէն եւ անոնց փոխարէն գետեղէ ուրախութիւնը, խոնարհութիւնը, մեր մէջ գտնուող խաւարին փոխարէն մեզ լուսաւորէ, մեր մէջ գտնուող վախն ու կասկածը վերցնելով մեզ ապահով զգացնէ, եւ մեր հաւատքը ամրապնդելով մեզ սորվեցնէ, թէ իր ներկայութեամբ այդ խառնավիճակ մսուրը ինք բիրեղանայ եւ կը դառնայ լուսաւոր ու սիրով լեցուն մսուր մը, որովհետեւ Ինքնին սիրոյ Աստուածը հոն հաստատուած է: Եւ եթէ Քրիստոս ինքն է թագաւորը մեր մսուրին եւ եթէ Քրիստոս մեր կողքին է՝ ո՞վ կրնայ մէզի հակառակ ըլլալ:

Կ’եզրափակեմ ըսելով. եթէ այդ ժամանակ Մոգերը նուիրեցին իրենց թանկագինը, որն է՝ «ոսկի, կնդրուկ եւ զմուրս», եկէք մենք ալ այսօր Քրիստոսի ծննդեան սիրոյն առթիւ երթանք մեր ներքին մսուրը եւ դիմաւորենք մեր մսուրածին թագաւորը, իրեն նուիրելով մեր ամենաթանկագինը «Սիրող սիրտ, խաղաղ խիղճ եւ անառատ հոգի»:

Ամէն:

Եսայի Սարկաւազ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ

ԱՂՔԱՏՆԵՐՈՒՆ ՈՂՈՄՈՒԹԻՒՆ ԸՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դանիէլ մարգարէն Նաբուգոդոնոսորին կ’ուսուցանէր, երբ ան իր մեղքերուն պատճառաւ հիւանդացած էր. Մարգարէին կը հարցնէր թէ ինչպիսի դեղեր կան այս հիւանդութեան համար եւ Դանիէլ որպէս բժիշկ իրեն մօտենալով կ’ըսէր. «Ո՛վ արքայ, ո՛չ պահքը, ո՛չ արթուն մնալը, ո՛չ քուրճը եւ ոչ ալ առանձնութիւնը կրնան օգտակար ըլլալ, այլ գնա՛ եւ մեղքերդ ողորմութեամբ քաւէ, իսկ անօրէնութիւններդ՝ աղքատներուն գթալով. Այս արարքն է որ քեզ պիտի արդարացնէ եւ այս ճանապարհն է, որ քեզ յաւիտենական կեանք պիտի առաջնորդէ» (Հմմտ. Դն. 4:27):

Կը տեսնէ՞ք որքան մեծ է ողորմութեան զօրութիւնը եւ ան որքան պարզերես կերպով ողորմածը կը կանգնեցնէ Աստուծոյ առջեւ, մանաւանդ ան որ սրտով անօթիները կը կերակրէ, ինչպէս Եսայի մարգարէն կ’ըսէ. «Հացդ սրտի մտօք անօթիներուն բաժնէ, անտունիները տոննդ տար, եթէ մերկ մէկը տեսնես՝ հագուեցնո՛ւր. ազգիդ տառապեալներուն երեսդ մի՛ դարձներ եւ այն ատեն Աստուած պիտի լսէ քեզ, երբ Ձինք կանչես եւ տակաւին չաղաղակած, պիտի ըսէ քեզի. ահա ես» (Հմմտ. Ես 58:7-9): Նման ողորմութիւն մը արագաթոյշ կերպով կը հասնի Աստուծոյ ականջը, որուն համար ալ Աստուած ողորմածին խնդրանքներուն օգնութեան կը հասնի շուտով: Աստուած միայն այս աշխարհի վրայ չէ որ ողորմածին կ’օգնէ եւ զայն կը փրկէ, այլ երբ ան այս աշխարհէն հանդերձեալին մեկնի՝ բազմապատիկ առատութեամբ անոր կը վերադարձնէ իր կատարած բոլոր ողորմութիւնները: Արդարեւ, Տէրը կ’ըսէ. «Աղքատներուն եղած ողորմութեան համար ես եմ պարտապանը, նոյնպէս ես եմ փոխատուն՝ անոնց տրուած դրամին» (Հմմտ. Առ 19:17): Ան որ կ’ողորմի աղքատներուն, փոխ կու տայ Աստուծոյ եւ Աստուած մէկը հարիւրապատիկ կերպով ետ կը դարձնէ անոր անանցանելի բարիքներով. աւելին՝ մեղքերը կը ներէ եւ ահեղ պատիժներէն կը փրկէ. «Երանի անոր, որ աղքատներուն հոգ կը տանի, նեղութեան օրը, Տէրը զինք պիտի փրկէ» (Սղ. 41:1):

Բայց ի՞նչ կը նշանակէ աղքատին եւ չքաւորին մասին մտածել: Անոնց մասին մտածել կը նշանակէ անոնց տառապանքներուն մասին խորհիլ, ըսելով որ ասիկա եղբայրս է, իմ մէկ անդամս, մարմինս, ինձ նման կարիքներ ունի, ամէն բանի կարօտ է, ինչքի, երդիքի ու անօթութեան վտանգին դիմաց արկածախնդրութիւններու կը դիմէ. տաքին՝ կը տաքնայ, ցուրտին՝ կը դողայ, ստամոքսը դատարկ է, մարմինը՝ մերկ, մագերը՝ թաղիկածեւ, դէմքը դեղնած է եւ թօշնած, ամբողջ մարմինը ճմլուած է եւ հալ ու մաշ եղած. Կը թափառի, կը վարանի, դուռէ դուռ կը դեգերի, յետոյ կանգ առնելով լալագին կը պողչտայ եւ ապա արգահատալից աղմուկ մը կը հանէ իր դժբախտ տառապանքներուն համար: Գիտնալով մեր անգթութիւնը, անվայել կերպով ու անամօթ կերպով կը ցուցադրէ իր հաշմանդամ մարմինը, որպէսզի մեր անմարդկային գութը շարժէ. Համարձակ կը դառնայ, կը լրբանայ եւ շատ աշխատելով քիչ մը ուտելիք կը գտնէ. դռներէն, գաւիթներէն եւ տուներէն ներս վախով կը մտնէ, որովհետեւ կը սարսափի տուներու շուներէն եւ կը վախնայ անասուններէն. ձիերը կից կը զարնեն, եզները կը հարուածեն, շուները կը վիրաւորեն, չար եւ անգութ մարդիկ կը նախատեն, կը վնասեն, նետի նման կը վիրաւորեն, մանաւանդ երբ ան հաշմանդամ, կոյր կամ տիսեղճ ըլլայ. անօթութենէ կը տառապի եւ ալեկոծ վիճակով անգութ մարդոց առջեւ կը կանգնի, որպէս թէ վայրի անասուններու առջեւ կանգնած ըլլար. Նախ կը նախատուի եւ ապա, եթէ կարենայ բան մը ստանալ, ատիկա կ’ըլլայ իր ստացած բազմաթիւ նախատինքներուն գինը: Երբ [մէկը] մտածէ այս բոլորի մասին ու քաղցր խօսքերով եւ գթասիրտութեամբ մխիթարէ կարիքաւորը եւ նաեւ ողբայ ու հառաչէ անոր համար, իրօք խորհած կ’ըլլայ աղքատին եւ չքաւորին մասին: Նման մարդոց համար է, որ մարգարէն «երանի» ըսաւ ու անոնք որ գութով եւ ողորմութեամբ կ’ընդունին աղքատները, նեղութեան օրը պիտի փրկուին:

Սուրբ Յովհան Մանդակունի

ՆՈՅ ՏԱՊԱՆ ՄԸ ԿԸ ՇԻՆԷ

Դրախտի պարտէզէն հեռանալէն ետք, Ադամն ու Եւան շատ զաւակներ ունեցան. մարդիկ բազմացան, բայց մոռցան իրենց Արարիչ Աստուածը, եւ սկսան չարիք գործել իրարու նկատմամբ: Միայն Նոյ անունով բարի մարդ մը կար, որ միշտ կը յիշէր Աստուած: Անիկա ունէր երեք որդի՝ Սեմը, Քամը եւ Յաբէթը: Աստուած շատ տխրեցաւ եւ որոշեց մարդիկը պատժել ջրհեղեղով, սակայն ուզեց խնայել, փրկել Նոյն ու անոր ընտանիքը ըսելով, որ կ’ուզէ ամէն ինչ նոր ըլլայ, առաջունս պէս:

- Նո՛յ, քեզի համար տապան մը շինէ,- ըսաւ Աստուած:

Ան գործի անցաւ: Երբ տապանը արդէն պատրաստ էր, Աստուած ըսաւ.

- Հիմա, ընտանիքդ եւ բոլոր կենդանիներէն մէկական զոյգ տապան մտցուր:

Նոյը ըրաւ այնպէս, ինչպէս Աստուած ըսաւ:

Երբ արդէն բոլորը ներսն էին, յորդ անձրեղ սկսաւ: Քառասուն օր, Քառասուն գիշեր անձրեւ տեղաց եւ ջուրը ծածկեց ամէն բան, նոյնիիսկ՝ բարձր լեռները, միայն տապանն էր, որ կը ծիփար ջուրերուն վրայ:

Անձրեւները դադրեցան: Նոյը արձակեց թռչուն մը, որ թռաւ, գնաց, բայց ցամաք չգտնելով, վերադարձաւ: Մէկ շաբաթ ետք, Նոյ աղանի մը դրկեց. անիկա վերադարձաւ՝ այս անգամ ձիթենիի ճիւղ մը կտուցին: Բոլորն ալ ուրախացան, որ ցամաք մը գտնուած է:

Տապանը նստաւ Արարատ լեռան գագաթին:

Երբ ջուրերը ցամքեցան, Նոյ բացաւ տապանին դուռը, եւ բոլորը դուրս ելան: Նոյ եւ իր ընտանիքը շնորհակալութիւն յայտնեցին Աստուծոյ: Աստուած գեղեցիկ ծիածան մը դրաւ երկնքի վրայ եւ ըսաւ.

- Այս ծիածանը իմ եւ ձեր բարեկամութեան նշանն է: Այլեւս այսպիսի ջրհեղեղով պիտի չպատժեմ մարդիկը:

*ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՅԻ ԱՇԿԵՐՏԻՆ ԳՐՔՈՅԿԸ*

ԳԻՏԷԻՐ ԹԷ...

Յիսուս Քրիստոսի ծնունդէն ետք, անոր այցելեցին երեք մոգեր, որոնք թագաւորներ էին: Առաջինը՝ Պարսից Թագաւոր Մելքոնն էր, երկրորդը՝ Հնդկներու թագաւոր՝ Գասպարը, իսկ երրորդը՝ Արաբներու Թագաւոր՝ Պաղտասարը:





Ջադրագովական 2

ԱՍՏՈՒԱԾ ԻՆՉՈ՞Ւ ԶԻ ԲԱՑԱՅԱՅՏԵՐ ԻՆՔԶԻՆՔ

Այս հարցումը, իրականութեան մէջ, յաճախ թերահաւատութեան եւ անհաւատութեան արդարացման միջոց մըն է պարզապէս, որուն վրայ կու գայ անելնալու, թէ՛ «ինչպէ՛ս կարելի է հաւատալ Աստուծոյ մը զոր չի տեսնուիր, չի լսուիր, չի շօշափուիր եւ որուն հետ կարելի չէ հաղորդակցիլ:»

Հաւատացեալներ, իրենք եւս, կրնան ուղղել նոյն այս հարցումը՝ ոչ թերահաւատութեամբ, այլ՝ իրենց հաւատացած, սիրած եւ ամբողջ սրտով պաշտած Աստուածը տեսնելու իղծէն՝ փափաքէն ելլելով: Նման զգացում մը ունեցաւ Մովսէս մարգարէն, որուն մասին կը կարդանք Ելքի գիրքին մէջ (Ելք 33.18-23), ուր ան իղծը ունեցաւ զԱստուած տեսնելու դէմ յանդիման:

Աստուծոյ անմիջականութիւնը՝ մօտիկութիւնը եւ անդրանձութիւնը՝ անհասանելիութիւնը տեսական աստուածաբաններու համար քննարկման նիւթեր են, որոնց մէջ չենք մտներ հոս: Բայց պէտք է փորձենք հասկնալ Աստուծոյ էութիւնը, բնութիւնը:

«Հոգի է Աստուած» (Յովհաննէս 4.24), կը հաստատէ Յիսուս, «որ անմատչելի լոյսի մէջ կը բնակի:» (Ա. Տիմոթէոս 6.16) կ'աւելցնէ Պօղոս առաքեալ: Իսկ Աստուծոյ պատասխանը Մովսէսին կ'ըլլայ. «մարդ չի կրնար զիս տեսնել ու ապրիլ:» (Ելք 33.20):

Բայց եւ այնպէս, Աստուած բացառութիւն մը կատարեց մարդկային պատմութեան մէջ, որ նոյնինքն Քրիստոսի մարդեղացումն էր, որով Աստուած եւ մարդ յարաբերութեան մէջ նոր ու աննախնթաց մակարդակի մը սկիզբը կը հանդիսանայ: Յովհաննէս առաքեալի վարակիչ խանդավառութիւնը զգալի է իր գրած հետեւեալ տողերուն մէջ, ուր կը խօսի մարդեղացեալ Քրիստոսի հետ իր ունեցած փորձառութեան մասին ըսելով. «Մենք լսեցինք, մեր աչքերով տեսանք եւ մեր ձեռքերով շօշափեցինք Որդին, Բանը, որ սկիզբէն իսկ կեանքի ստեղծիչն էր: Անիկա նոյնինքն կեանքն էր, որ յայտնուեցաւ: Մենք տեսանք եւ կը վկայենք, ձեզի պատմելով անոր մասին, այսինքն՝ յաւիտենական կեանքին մասին, որ Հօրը հետ էր եւ այժմ մեզի յայտնուեցաւ: Ինչ որ տեսանք ու լսեցինք՝ կը պատմենք ձեզի, որպէսզի դուք ալ մասնակից դառնաք այն հաղորդակցութեան, որ մենք ունինք Հօրը եւ անոր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի հետ, եւ ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ:» (Ա. Յի 1.1-4, շեշտադրումը ինծմէ):

Արդարեւ, Աստուած ինքզինք տեսանելի դարձուց մարդեղացեալ Յիսուսի յայտնութեամբ: Այո՛, Աստուած մեզի պէս եղաւ, իր վրայ առնելով մարդկային մեր բնութիւնը: Արդարեւ, Պօղոս առաքեալ, խօսելով Յիսուսի մասին, շատ յստակ կերպով կը հաստատէ, թէ՛ «Քրիստոս ինք՝ տեսանելի պատկերն է աներեւոյթ Աստուծոյ:» (Կողոսացիս 1.15) եւ թէ՛ «մարդացած Քրիստոսի մէջ կը բնակի աստուածային բնութեան ամբողջ լիութիւնը:» (Կողոսացիս 2.9): Յիսուս, ինք եւս, կ'ըսէ. «ով որ զիս տեսաւ՝ Հայրը [Աստուած] տեսած եղաւ:» (Յովհաննէս 14.9): Եբրայեցիներու նամակին հեղինակը կը գրէ. «Անցեալին բազմաթիւ անգամներ եւ բազմաթիւ կերպերով Աստուած մեր հայրերուն խօսեցաւ մարգարէներուն միջոցաւ, իսկ այս վերջին օրերուն մեզի խօսեցաւ իր Որդիին միջոցաւ:» (Եբրայեցիս 1.1-2ա):

Աստուած ինքզինք կը բացայայտէ, նաեւ, ստեղծագործութեան ընդմէջէն: 19-րդ Սաղմոսին մէջ կը կարդանք. «Երկինքը Աստուծոյ փառքը կը պատմէ, երկնակամարը անոր արարչութեան կը վկայէ:» (Սղ 19.1): Երբ կը խօսինք տիեզերքի մասին, մեզի կը թուի թէ՛ անիկա գիտական հետազօտութիւններու անսահման աղբիւր մըն է սոսկ: Սակայն, Հռոմայեցիներուն ուղղած իր նամակին մէջ, Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Ստեղծագործութեան ընդմէջէն կ'իմացուին ու կը տեսնուին Աստուծոյ աներեւոյթ յատկանիշները, այսինքն՝ մշտնջենաւոր զօրութիւնը եւ անոր աստուածութիւնը:» (Հռ 1.20ա): Արդ, տիեզերքը կու գայ բացայայտելու Աստուծոյ մեծափառութիւնը եւ զօրութիւնը եւ կը հրաւիրէ, կը մղէ ու կը ներշնչէ մեզ՝ պաշտելու մեր Երկնաւոր Հայրը:

Ի վերջոյ, Աստուած ինքզինք կը յայտնէ նաեւ Սուրբ Հոգւոյ ներքին վկայութեամբ: Ասիկա անձնական փորձառական ապրում մըն է, թէեւ, սակայն՝ անոր արտաքին նշաններն ու պտուղները տեսանելի կը դառնան այն մարդոց կեանքին մէջ, որոնք հոգեփոխութիւն ապրած են եւ նոր արարած դարձած՝ Քրիստոսի Հոգւոյ ներգործութեամբ: Երանելի Օգոստինոսը նման օրինակ մըն է:

Աստուած կարողութիւնը ունի ինքզինք յայտնելու որեւէ ձեւով, կերպով եւ միջոցով: Ան կրնայ ծովեր ճեղքել եւ մեռելներ յարուցանել: Բայց արդեօք ասոնք բաւարար ապացոյցներ պիտի ըլլան, որպէսզի մարդիկ Աստուծոյ հաւատան: Կը կասկածիմ: Մեծամասնութիւնը այն մարդոց, որոնք ականատեսը եղան Յիսուսի կատարած իրաշքներուն, դառնօրէն եւ ապերախտօրէն մերժեցին զայն:

Մէկ բան յստակ պէտք է ըլլայ մեզի, որ Աստուած չէ հետաքրքրուած մեզ տպաւորելով, այլ՝ անոր փափաքն է մեզի հետ յարաբերութիւն հաստատել: Եւ որովհետեւ Աստուած հոգի է, մարմին առաւ եւ մեր մարդկային բնութեան մասնակից դարձաւ, որպէսզի մեզ ալ մասնակից դարձնէ իր աստուածային հոգեղէն բնութեան, որպէսզի կարենանք հաղորդակցիլ իրեն հետ՝ «հոգիով եւ ճշմարտութեամբ» (Յովհաննէս 4.24):

Աստուած՝ Քրիստոսով ինքզինք յայտնած է միանգամընդմիշտ եւ բոլորին համար: Եթէ չես զգար Աստուծոյ ներկայութիւնը կեանքիդ մէջ եւ եթէ Աստուած բացակայ կամ հեռու կը թուի ըլլալ, յիշէ թէ՛ անիկա պարզապէս մէկ աղօթք անդին է քեզմէ:

«Փնտռեցիք եւ պիտի գտնէք:» (Մատթէոս 7.7), որովհետեւ՝ «Տէրը մօտիկ է անոնց՝ որոնք իրեն կ'աղօթեն, բոլոր անոնց՝ որոնք իրեն կ'աղօթեն անկեղծութեամբ:» (Սաղմոս 145.18)1

Հայր Գեղարդ

Յ.Գ. մեզի ուղարկեցեք Աստուծոյ եւ ձեր հաւատքի ճանապարհորդութեան մասին ձեր ունեցած հարցումները:

Apologetics 2

WHY DOESN'T GOD SHOW HIMSELF?

This question might sound like a justification for unbelief and it can even be expanded to say: how can one believe in a God that cannot be seen, heard, touched, or communicated with?

Believers, on the other hand, may ask the same question not out of doubt, but with a yearning to see the God they believe in and love and worship wholeheartedly. Moses had such a yearning we read about in the book of Exodus (33:18-23); he wanted to see God face to face.

God's imminence and transcendence are topics for systematic theologians to tackle. But we don't need to get into that. What we need to understand, though, is the essence and the nature of God.

«God is spirit» (John 4:24) Jesus says, “who lives in unapproachable light, whom no one has seen or can see” (1 Timothy 6:16) adds the Apostle Paul. God's answer to Moses was: “No one may see me and live.” (Exodus 33:20).

And yet, God has made an exception in human history, which is the incarnation of Jesus, and which raises the relationship between God and humans to a new and unprecedented level of intimacy. John enthusiastically writes about his experience with the incarnate Christ, you can almost feel his excitement in his words when he writes the following: “That which was from the beginning, which we have heard, which we have seen with our eyes, which we have looked at and our hands have touched—this we proclaim concerning the Word of life. The life appeared; we have seen it and testify to it, and we proclaim to you the eternal life, which was with the Father and has appeared to us. We proclaim to you what we have seen and heard, so that you also may have fellowship with us. And our fellowship is with the Father and with his Son, Jesus Christ. We write this to make our joy complete.” (1 John 1:1-4; emphasis by me). John wants to share his joy in Christ with everyone.

God made himself visible in the manifestation of the incarnate Jesus. Yes, God became one of us and took upon himself our human nature. And in fact, the apostle Paul, talking about Jesus, states, in unambiguous terms, the following: «Christ is the visible image of the invisible God.” (Colossians 1:15) and “In Christ lives all the fullness of God in a human body.” (Colossians 2:9). Jesus himself stated that “Anyone who has seen me has seen the Father [God]!” (John 14:9). The author of the epistle to the Hebrews writes: “God has communicated with us in a variety of ways: Long ago God spoke many times and in many ways to our ancestors through the prophets. And now in these final days, he has spoken to us through his Son.” (Hebrews 1:1-2a).

Another way God reveals himself is through the creation itself. Here's what Psalm 19 reads: “The heavens proclaim the glory of God. The skies display his craftsmanship.” (Psalm 19:1).

When we think about the universe, we see it as an infinite resource for scientific exploration. And yet, in the epistle to the Romans, apostle Paul describes the whole creation as a witness to God: “Since the creation of the world God's invisible qualities—his eternal power and divine nature—have been clearly seen” (Romans 1:20a). The universe reveals God's majesty and power, and invites us, motivates and inspires us to worship our heavenly Father.

Finally, God reveals himself to believers through the inner witness of the Holy Spirit. This is something experiential and personal. But it has its outward signs and its fruits we see in the lives of those, who have been touched by the Spirit of Christ and have become a new creation.

God can reveal himself in any way, shape or form. God can part seas or raise the dead from the grave, but would that be enough evidence for people to believe in Him? I doubt it. Most of the people who witnessed Jesus' miracles acrimoniously and ungratefully rejected him. One thing must be clear to us, God is not interested in impressing us with signs and wonders, but rather in establishing a real and genuine relationship with us. And since He is spirit who took on himself flesh and shared our human nature, in order that we might be able to share in His divine spiritual nature and communicate with him «in spirit and in truth» (John 4:24).

God in Christ has revealed himself once and for everyone. If you can't feel God's presence, if God seems distant and absent from your life, he's just a prayer away.

«Seek and you shall find» (Matthew 7:7), for “the Lord is close to all who call on Him, yes, to all who call on Him in truth.” (Psalm 145:18).

Fr. Keghart

P.S. send us your questions concerning God and your journey of faith.

ԽԱՂԱՂ ԿԵԱՆՔ ԽՆԴԻՆԵԼՈՒ ԱՂՕԹՔ

